ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մարտի 2013 թվականի N 61-Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի N 2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին»» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի և 3-րդ մասի պահանջների՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2003 թվականի հունվարի 16-ի ««Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները հաստատելու մասին» N 2 որոշմամբ հաստատված «Գեղաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Կանոնադրության տիտղոսաթերթում և կանոնադրության 1-ին կետում «Ռ.» բառը փոխարինել «Ռազմիկ» բառով:

2. Հաստատել «Գեղաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը:

3. Հանձնարարել դպրոցի տնօրեն Նաիրա Բաբայանին՝ անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ կանոնադրության մեջ կատարած փոփոխությունը գրանցելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Գ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ